

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԲ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երևանի պետհամալսարանի հրատարակչությունը 2016թ. լույս է ընծայել թուրքագետներ, բանասիրական գիտ. թեկնածուներ Ռուբեն Մելքոնյանի և Նաիրա Պողոսյանի «Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրականության մեջ (XX դ. երկրորդ կեսին - XXI դ. սկզբին)» (148 էջ) ուսումնասիրությունը, որը, ցավոք, տպագրվել է շատ փոքր տպաքանակով՝ ընդամենը 150 օրինակ:

Հաշվի առնելով այն, որ այս կարևոր հրատարակությունը օգտակար կլինի թուրքագետների, ցեղասպանագետների, գրականագետների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար, ուստի այն շատերին հասանելի դարձնելու համար մենք թերթի այս և հաջորդ համարներում գրքից որոշ հատվածներ կհրապարակենք:


«Չայն համշենականի» խմբագիր

Հրանտ Դինքը մի քննադատական հարց-եզրահանգում էլ է անում կապված թուրք հայտնի կոմունիստ բանաստեղծ Նազըմ Հիքմեթի հետ, ով երկար տարիներ որպես վտարանդի ապրել է Մոսկվայում:

Ըստ Դինքի, չնայած այն հանգամանքին, որ Նազըմ Հիքմեթը Թուրքիայի ծախակողմյան շարժման մեջ ունեցել է հայազգի ընկերներ, ավելին՝ Մոսկվայում ապրելու ժամանակ ընկերություն է արել խորհրդային Հայաստանից մի քանի հայ բանաստեղծների հետ, սակայն միևնույն է Հայոց ցեղասպանության թեմային գրեթե չի անդրադարձել³⁵: Ավելի ուշ անդրադառնալով թուրք մտավորականների և ընդհանրապես հասարակության անտեղյակության մասին առաջ քաշված թեզին՝ Հրանտ Դինքը ամբողջացրել և մանրամասնել է իր մտքերը. «1915-ից հետո, իրականում, Թուրքիայի հասարակությունն իր գյուղացիներով, քաղաքացիներով շատ լավ գիտեր, թե այդ ժամանակվա շրջանում ինչեր են տեղի ունեցել: Շատերը վկան են եղել տեղի ունեցածներին, որոնք վատ և ցավալի էին ու դրա համար պետք էր լռել: Այս հարցում պետական դիրքորոշումն էլ լռությունը պաշտոնականացրեց: Այս թեման դարձավ տաբու: Ոչ միայն պահպանողականները, այլև իրենց հեղափոխական համարողներն էլ այս թեմայով երկու խոսք չկարողացան ասել: Նազըմ Հիքմեթի բանաստեղծություններում Հայկական հարցի վերաբերյալ լույս մեկ տող է տեղ գտել, այդքանը միայն»³⁶:

Մեր կարծիքով թուրք գրողներն առաջ են քաշել անտեղյակության մասին թեզը նպատակ ունենալով թաքցնել իրենց կողմից հայկական թեմատիկային չանդրադառնալու հիմնական դրդա-

պատճառները, որոնք կամ քողարկված ազգայնամոլական էին, կամ էլ՝ խուսափողական: Գրողի և համարձակության մասին շատ դիպուկ է նկատել Բերտոլդ Բրեխտը համաձայն որի. «Գրողը պետք է ունենա ճշմարտությունը ասելու համարձակություն»³⁶:



Այդ համատեքստում կարևոր է անդրադառնալ թուրք գրականության և ընդհանրապես Թուրքիայի ու դրա սահմաններից դուրս հասարակական-քաղաքական ասպարեզներում ընդդիմադիր սոցիալիստի, կոմունիստի համարում ունեցող հայտնի պոետի՝ Նազըմ Հիքմեթի (1902-1963 թթ.) որոշ ստեղծագործություններին: Ինչպես վերը նշվեց, Նազըմ Հիքմեթը ևս հայկական խնդիրն հպանցիկ է անդրադարձել՝ մեկ-երկու տողով: Նրա «Կռնատ Իսմայիլը» բանաստեղծությունում հանդիպում ենք հետևյալ տողերին.

Իսմայիլին զորահավաքի ժամանակ,
Չնայած 16 տարեկան էր,
Բռնեցին բանակ ուղարկեցին,
Յոգլաթի կողմերը ոստիկան գնաց,
Եվ հայերին կոտորելիս
Մինչև պորտը արյան մեջ թաղվեց³⁶:

Նազըմ Հիքմեթի մեկ այլ՝ «Երեկոյան զբոսանք» բանաստեղծության մեջ խոսելով հայազգի նպարավաճառ Կարապետի մասին՝ բանաստեղծը նշում է.

Նպարավաճառ Կարապետի լույսերը
վառվեցին,
Չներեց այս հայ քաղաքացին
Քրդական լեռներում հոր մորթվելը,
Սակայն սիրում է քեզ,
Քանի որ դու էլ չներեցիր
Այս սև բիծը
Թուրք ժողովրդի ճակատին
քողներին³⁷:

Այս բանաստեղծությունները հատկապես վերջին շրջանում շատ են մեքերվում և դրանով փորձ է արվում ներկայացնել և համոզիչ դարձնել թուրք գրողի «ճշմարտության մարտիկի» կերպարը, սակայն միևնույն ժամանակ միևնույնափոր անտեսվում են նույն Նազըմ Հիքմեթի այլ ստեղծագործություններում տեղ գտած անթաքույց արհամարհանքը, խտրական, անգամ՝ թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Փաստենք նաև, որ ինչպես շատ այլ գրողների, այնպես էլ Նազըմ Հիքմեթի մոտ հայ կերպարները գերազանցապես հանդես են գալիս որպես բացասական հերոսներ: Այսպես, Նազըմ Հիքմեթի «Իմ երկրից մարդկային տեսարաններ» պոեմում խոսելով Բուրսա քաղաքի բաղնիքների մասին նշում է, որ այնտեղ է տարել մի հայ աղջկա և հավելում. «Նորամանկ է հայ ժողովուրդը, ոչ թե մեր թուրքերի նման»: Պոեմի այդ հատվածն ավարտվում է նրանով, որ հայ աղջիկը չնայած իր հետ ունեցել է սեռական հարաբերություն, սակայն հետո ամուսնացել է քանի որ «օժիտը տեղը տեղին է, իսկ դա էլ հայտնի գյավուրական սովորույթ է»³⁸: Չնայած որ Նազըմ Հիքմեթը հռչակել է, թե դեմ է ազգային, ռասայական ձևակերպումներին և ընկալումներին, սակայն իր տարբեր ստեղծագործություններում, հոգևածներում, նամակներում կան հստակ և բացահայտ ազգայնամոլական շեշտադրումներ, որոնք նաև հակասում են պատմական իրողություններին: Այսպես, 1944 թ. իր որդուն գրած նամակում նշում է. «Մեր երկրի սահմաններում ապրում են նաև հայեր, հույներ և քրդեր»³⁹: Այստեղ «այլախոս» գրողը մոռանում է, որ այդ սահմանների առնվազն մի մասը հայկական և հունական տարածքներ են և այդ ժողովուրդները այնտեղ ապրում էին որպես իրենց նախահայրենիք, իսկ թուրքերը եկվոր են:

Սակայն կարևոր է հատուկ շեշտել, որ Նազըմ Հիքմեթը ընդհանրապես խտրական վերաբերմունք է դրսևորել Թուրքիայում բնակվող այլ ժողովուրդների հանդեպ ևս և չի անդրադարձել նրանց խնդիրներին: Մասնավորապես՝ Հիքմեթի ստեղծագործություններում չենք հանդիպում Թուրքիայում քրդական հուզումների, ապստամբությունների վերաբերյալ անդրադարձների, չնայած, որ պոետը բավական լավ տեղյակ է եղել այդ մասին: Նազըմ Հիքմեթը չի անդրադարձել նաև Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հանդեպ պարբերաբար տեղի ունեցող հալածանքներին, ջարդարարություններին և այլն: Սակայն դրա փոխարեն բավական խորքային նկարագրել է Բուլղարիայում բնակվող թուրք փոքրամասնության անհամեմատ

ավելի մեղմ խնդիրները, լուծումներ առաջարկել և բարձրաձայնել այդ մասին⁴⁰: Սա նույնպես Նազըմի կողմնապահության ավելին՝ ազգայնամոլական հայացքների հստակ դրսևորումներից է: Բավական ուշագրավ է, որ Նազըմ իր հայացքը նետել է նաև դեպի արևելք և անդրադարձել Իրանում բնակվող «ազերի թուրք եղբայրներին» և իր մտահոգությունը հայտնել. «Իրանում չորս միլիոն ազերի թուրք է ապրում, սակայն որպես ազգ նրանց ոչ մի իրավունք ճանաչված չի: Իրենց մայրենի լեզվով դպրոց անգամ չունեն»⁴¹: Այստեղ արդեն բացահայտվում են Նազըմ Հիքմեթի պանթուրքիստական հայացքները, որոնք խորքային ու շարունակական են եղել և դրսևորվել են հետագայում ևս: Այսպես, ապրելով ԽՍՀՄ-ում 1957 թ. Նազըմ Հիքմեթը այցելել է Ադրբեջան, հանդիպել տեղի գրողների հետ և հետագայում Ադրբեջանի գրողների միության նախագահ Անար Ռեզայեղ այդ հանդիպման մասին պատմել է. «Թուրքիայի համար Նազըմ Հիքմեթը միզուցե կոմունիզմի, սոցիալիզմի խորհրդանիշն էր, սակայն Ադրբեջանի համար Նազըմ Հիքմեթը թուրքականության խորհրդանիշն էր: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ երբ նա եկավ այստեղ «թուրք» բառի կիրառումը արգելված էր, իսկ նա հայտարարում էր. «Ես թուրք եմ, դուք էլ եք թուրք, մեր լեզուն նույնն է, մենք եղբայր ենք, նույն ազգն ենք»: Այն ժամանակ Ադրբեջանում ոչ ոք չէր կարող համարձակվել նման խոսքեր ասել, սակայն Նազըմն ասում էր և քանի որ կոմունիստ էր դա նրան ներում էին»⁴²: Փաստորեն ժողովուրդների բարեկամության «անխոնջ մարտիկի» վերոնշյալ խոսքերը հետագայում դառնալու էին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի կողմից հրապարակ նետված պանթուրքիստական կարգախոսի հիմքը. «Մեկ ազգ երկու պետություն»:

Այս և այլ փաստեր հիմք են տվել, որպեսզի ներկայումս որոշ ուսումնասիրողներ անդրադառնան և հետազոտեն Նազըմ Հիքմեթի ոչ այնքան «կոմունիստական» նկարագրի տարբեր շերտերը և դրանց արտացոլումը նրա ստեղծագործություններում: Նկատենք նաև, որ այս տիպի հետազոտությունները ըստ էության ժխտում են խորհրդային գրականագիտության տասնամյակներով ստեղծած Հիքմեթի ազգերի եղբայրության ջատագովի կերպարը, ինչին նվիրված կան բազմաթիվ գրքեր ու հոդվածներ, որոնք գերհագեցած են թուրք պոետին ուղղված գովեստի ու հիացմունքի խոսքերով: Նազըմ Հիքմեթի իրական կերպարը բացահայտող ուսումնասիրություններից (շարունակությունը՝ 2-րդ էջում)

(սկիզբը՝ 1-ին էջում)

է ազգությամբ քուրդ Հուսեյին Ջանի գիրքը, որում հեղինակը բազմաթիվ փաստերի, պոետի ստեղծագործությունների ներկայացման և վերլուծության հիման վրա ի ցույց է դնում, որ «Կոմունիստ Նազըմ» անունը ստացած բանաստեղծ և քաղաքական գործիչը իրականում չի համապատասխանում այդ բնութագրմանը⁴³։ Հուսեյին Ջանը իրավացիորեն նշում է, որ Թուրքիայում գրեթե բոլոր շերտերի վրա տարածված պանթուրքիզմի կամ ազգայնամոլության ազդեցությունը, որքան էլ որ զարմանալի է, տարածված է եղել նաև ծախակողմյան շրջանակների այդ թվում՝ և Թուրքիայի կոմունիստական կուսակցության ու նրա անդամների վրա⁴⁴։ Նույն հեղինակը կարծում է, որ Նազըմ Հիքմեթի մոտ ազգայնամոլական հայացքների ձևավորման մեջ մեծ տեղ ունի նաև նրա ընտանիքը. այդ առումով հատկանշական է պոետի մոր պապի՝ ազգությամբ լեհ Կոնստանտին Բորժենսկու կերպարը։ Նա 18-րդ դարի կեսերին տեղափոխվել է Օսմանյան կայսրություն, փոխել անունը և ազգայնամոլական շրջանակներում մինչ օրս էլ հայտնի է որպես. «Թուրքիայի պատմության մեջ առաջին մեծ պանթուրքիստներից մեկը»⁴⁵։

Կարևոր ենք համարում նշել, որ Նազըմ Հիքմեթի վառ արտահայտված ազգայնամոլական, անգամ՝ ռասիստական բնույթի հայացքները տեղ են գտել դեռևս նրա վաղ շրջանի բանաստեղծություններում, որոնք խորհրդային ուղղորդված գրականագիտության մեջ ակնհայտ միտումով և դիտավորությամբ անտեսվել են։ Հիքմեթի վաղ շրջանի՝ 1919-1920 թթ. բանաստեղծություններից մեկում, որը վերնագրված է «Իմ ռասային», կարդում ենք.

Է՛յ իմ ռասա, դու մի ժամանակ
Դողացնում էիր Եվրոպան
Նվաճում էիր Ստամբուլը...
Մի ժամանակ Եվրոպան
Խեղդվում էր տգիտության մեջ
Կրկին դու ո՞վ իմ ռասա
Որ հմուտ էիր գիտության մեջ
Իշխում էիր իմաստուններին
Ինչո՞ւ այսօր Եվրոպան
Քեզ մարտահրավեր նետի
Ինչո՞ւ այսօր
Այդ տգիտության օրրանը
Քեզ գիտություն սովորեցնի⁴⁶։

33 Խառապյան Հ., Նեյզի Լ., Խոսելով միմյանց հետ՝ Անձնական հիշողություններ անցյալի մասին Հայաստանում և Թուրքիայում, Ստամբուլ, 2010, էջ 106։

34 Kaplan S., 1915-te ne oldu?, Istanbul, 2005, 2-inci baski, s. 77-78.

35 Can H., Ittihatçı-Kemalist Ideolojiden Kurtulamamis Sosyal Sovet TKP'nin Üyesi Bir Sair: Nazim Hikmet ve Kürtler, Istanbul, 2-inci Baski, 2010, s. 9.

36 Berktaş H., նշված հոդ.։

37 Նույն տեղում։

38 Belge M., Edebiyatta Ermeniler, Istanbul, 2013, s. 72.

39 Can H., նշված աշխ., էջ 169.

40 Նույն տեղում, էջ 178-180։

41 Նույն տեղում, էջ 181։

42 Նույն տեղում, էջ 55-56։

43 Նույն տեղում, էջ 13։

44 Նույն տեղում, էջ 29։

45 Նույն տեղում, էջ 32։

46 Hikmet N., İlk Siirler, Istanbul, 2000, s. 14.

ՆԵՌԱՎՈՐ ՆԱՅԻՆԵՆԻՔԻ ԿԱՆՉԸ

Հայրենիքից անուշ ու թանկ Ուրիշ ի՞նչ կա երկնքի տակ։

Հայ ժողովուրդը միշտ է զգացել իր Հայրենիքի առավելությունը, վեհությունը, սրբությունը, սակայն դարեր ի վեր գաղթել է և մորմոքել է, տառապել կարոտից։ Քանի՞ քանիսն են փորձել ազատվել այդ քեռից, սակայն ոչինչ չի ստացվել։ Մեր Հայրենիքի ձգողական ուժը ուրիշ է, այն չես համեմատի ոչ մի ուրիշ երկրի հետ։ Իր արմատներից կառչելով է հայը աճում, զարգանում ու գոյատևում։ Իր արմատների կենսատու ուժով է հայը հայ մնում։ Որտեղ էլ ապրի՝ նա արարող է, ստեղծագործ, շինարար։ Ուր էլ գնա՝ կստեղծի իր եկեղեցին, դպրոցը, շուրջը կհավաքի իր նմաններին, կստեղծի մի փոքրիկ Հայաստան, բայց միևնույն է, կտառապի կարոտից, իր արմատներին կառչելու մորմոքից։

Կրասնոդարում փոքրիկ Հայաստան է վաղուց դարձել Ս. Հովհաննես Ավետարանիչ առաջնորդանիստ եկեղեցին, որն իր շուրջն է հավաքում հայրենասեր, ազգամկեր անձանց, որոնք էլ ջանք ու եռանդ չեն խնայում հայապահպանման գործում։

Նրանց միջոցներով է կառուցվել «Վարդանյան» կենտրոնի հիասքանչ շենքը՝ իր «Արմատ» դպրոցով, որտեղ անվճար հայերեն են սովորում հայրուրավոր մանուկներ ու պատանիներ։ Արվում է ամեն ինչ ուսման արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների քանակը ավելացնելու համար։ Դպրոցի ուսմասվար Երազիկ Հարությունյանի կողմից ստեղծվել է միասնական «Արմատ» ծրագիրը՝ իր չորս դասադրքերով (Ե. Հարությունյանի «Մեծ Միեր», «Փոքր Միեր» և Կ. Կատանյանի «Սասունցի Դավիթ», «Հայկ»)։ Սակայն այսքանը բավարար չհամարելով, նրանց հորդորներով և միջամտությամբ հայկական խմբակներ են բացվել նաև պետական լրացուցիչ կրթության համակարգերում՝ «Պրիկուբանսկի» և «Ցենտրալնի» կենտրոններում, որոնք համագործակցում են միմյանց հետ և պարապում միասնական «Արմատ» ծրագրով։

Կրասնոդար քաղաքի ամեն շրջան ունի իր լրացուցիչ կրթության կենտրոնը, որտեղ հանրակրթական դպրոցից հետո երեխաները ստանում են լրացուցիչ կրթություն արվեստի, գիտության, լեզուների ուսումնասիրության և այլ ոլորտներում։ "Ցենտրալնի" ստեղծագործական զարգա-



ցման կենտրոնում գործում է «Իմ աշխարհը» միավորումը, որտեղ երեխաները սովորում են հայոց լեզու և մշակույթ։ Այս ուսումնական տարում այդ միավորումի տարբեր տարիքային խմբերում սովորում է 80 երեխա։ «Պրիկուբանսկի» մանկական ստեղծագործական տանը ևս գործելու, գիտության, լեզուների ուսումնասիրության և այլ ոլորտներում։ "Ցենտրալնի" ստեղծագործական զարգա-

2017թ. մարտի 29-ին «Ցենտրալնի» ստեղծագործական զարգացման կենտրոնի հյուրերն էին բազմաթիվ մանկավարժներ, բարերարներ և ծնողներ։ «Իմ աշխարհը» միավորման՝ նախադպրոցական տարիքի 4-6 տարեկան «Հայկ Նահապետ» և կրտսեր դպրոցական տարիքի 7-9 տարեկան «Սասունցի Դավիթ» խմբերի սաները իրենց հայրենասիրական, հա-

յագիտական հաշվետու միջոցառումն էին ներկայացնում։ Ռուսական պետական կրթական կենտրոնի դահլիճը վերափոխվել, դարձել էր մի կտոր Հայաստան՝ իր վեհափառ, սեզ Արարատով, եռագույնով, ու հայկական չիղկված քարեր ու հարթ կտուր ունեցող խրճիթով։ Հնչեց հոգին տակնուվրա անող դուդուկը, և ներս մտան ազգային տարազներով կրտսեր դպրոցականները։ Ու տառան, տարան հանդիսատեսին դեպի իր ծննդավայրը, հայրենիքը, արմատները, յուրաքանչյուր մասնիկով ու ելևէջով համոզեցին, թե ինչքան խեղճ են առանց Հայաստանի... Լռեց դուդուկը, ու Հայկ Նահապետի սուլացող նետի հաստատուն շառաչի տակ ներս մտան թոթվախոս մանուկները.

- Ով եք դուք:
- Հայ ենք մենք,
Մեր անունը Հայկազուն է:
Հայաստանը մեր երկիրն է,
Մեր պապերի հայրենիքն է:

Ինչքա՞ն հպարտություն կար նրանց սևուկ աչիկներում, ի՞նչ հաստատուն բռնուցք էին բարձրացնում հայրենիքի անունը տալիս։ Թող որ ռուսախոս ու դեռ շատ փոքրիկ, սակայն հոգու կանչով զգում էին հեռավոր հայրենիքում իրենց ճյուղավորված արմատները։ Այնուհետև սկսվեց մանկական թեմատիկ բանաստեղծությունների շարքը, որոնք հեղինակել էր ուսուցիչը, մանկական երգերի ուղեկցությամբ։ Հանդիսատեսի աչքերում ժպիտն էր առկայծում։ Բոլորը հիացած լսում էին փոքրիկների ռուսական առոգանությամբ, սակայն արդեն ճիշտ և հաստատուն հայերեն խոսքը։ Մթնոլորտը ավելի աշխուժացավ, երբ սկսեցին մրցել կրտսեր դպրոցականները՝ իրենց ծնողների հետ, շուտասելուկների արտասանությամբ։ Բարձր ու հաճելի տրամադրությունը իր գագաթնակետին հասավ, երբ երեխաները կերպարանափոխված սկսեցին բեմադրել Հ. Թումանյանի «Սուտասանը» և «Բարեկենդանը» հեքիաթները։ Այս կենտրոնում ամեն ինչ արվում է, որ մայրենի լեզվին և հայրենի մշակույթին առնչվելը դառնա տոն, հոգու շքեղ հանդիսություն։

ԿԱՐԻՆԵ ԿԱՏԱՆՅԱՆ
Կրասնոդարի «Ցենտրալնի» լրացուցիչ կրթական կենտրոնի մանկավարժ

ՌՈԶԱ ԽԱՍՏՅԱՆ
Աղըղեական Հանրապետություն
ք. Մայկոպ

ՆԱՆԴԻՊՈՒՄ ԱՊԱԳԱՅԻ ՆԵՏ

Վաղուց չէի եղել ոչ մի դպրոցում: Եվ ահա, Աղըղեական Հանրապետության Պրոլետարսկի ավանի N 20 միջնակարգ դպրոցում մայրենի լեզվի օրը նշելու միջոցառմանը որպես գրող, Հայաստանի գրողների միության անդամ մասնակցելու հայոց լեզվի ուսուցչուհու՝ Արփենիկ Սոֆոյանի սիրալիր հրավերն ընդունելով, 2017 թ. փետրվարի 25-ին պայմանավորված ժամից էլ շուտ հայտնվում եմ դպրոցի բակում:

Չայն-ծայտուն չկա: Ջարմանում եմ: Ըստ իմ ունեցած տեղեկության՝ այս ավանում, որտեղի բնակչության իննսուն տոկոսը հայ է, միայն մի դպրոց կա: Դա այս դպրոցն է, որը ներկայումս

նում, ընկեր Արփենիկը ներողություն խնդրելով ուզեց գնալ իր դասարանը, ինձ թողնելով տնօրենի և ուսմասվարի հետ:

Ես շատ էի ցանկանում ներկա գտնվել դասին և ասացի այդ մասին: Ընկեր Արփենիկը սիրով համաձայնվեց:

Հայոց լեզվի դասը երրորդ դասարանում էր: Մենք ներս մտանք և երեխաները մի մարդու պես կանգնեցին:

Ես ժպացի ու բարևեցի նրանց, նրանք խմբով պատասխանեցին: Դա արդեն հուզիչ էր ու ես անմիջապես ինձ ուսուցչուհի զգացի: Հետո գնացի և նստեցի վերջին նստարաններից մեկի վրա, մի աղջնակի կողքին:

Ընկեր Արփենիկը երեխանե-

րորտեղ «հայոց լեզու» առարկա կա միայն ընդհանուր ժամերի մեջ: Իսկ այդ ժամերը, հայերենի ժամերը... ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, շաբաթական ընդամենը ԵՐԿՐԻՄՆ ԵՆ 1-9-րդ դասարաններում: 10-11-րդ դասարաններում հայոց լեզվի ժամեր ԱՐԴԵՆ ՉԿԱՆ:

Վերջ: Արդեն սովորել-վերջացրել եմ, շարունակելու կարիք այլևս չկա: Այնինչ, անգլերենին հատկացված է շաբաթական երեք ժամ, տասնմեկերորդ դասարանում՝ ներառյալ:

Ի՞նչ պիտի հասցնեն սովորել, իմանալ հայերեն դասերին երեխաները հայոց լեզվի մասին...

Երևի միայն գրաձանաչ են դառնում և վերջ: Բայց դրան էլ փառք եմ տալիս: Որովհետև Ռուսաստանի ուրիշ տեղերում այդքան էլ չկա հայ մանուկների համար...

Հետո ես հակիրճ պատմեցի նրանց իմ կենսագրությունը և ասացի, թե որքան կարևոր է օտարության մեջ մայրենի լեզուն իմանալը: Որ լեզուն ազգապահպանման կարևոր բաղադրիչն է, որ իրենց ավելի կհարգեն օտարները, եթե նրանք այլ լեզու-



երեքշաբթվա դասին էլ գալ... Չխոստացա: Բայց ասեցի, որ ուրիշ մի օր անպայման պիտի գամ...

Երբ զանգը հնչեց, ինձ հրավիրեցին մի լայնարձակ դասասենյակ, որտեղ արդեն հավաքվել էին դպրոցի մյուս սաները և ուսուցիչները: Նստեցի ինձ հատկացված տեղում: Դիմացը սպիտակ էկրան կար:

Քիչ հետո հայկական մեղեդի հնչեց և էկրանի վրա երևացին իմ դիմանկարը, կենսագրություն-

կայացրեց անձս և խոսքը տվեց ինձ: Հուզվում էի:

Առաջին՝ նրանից, որ... ինձ համար դպրոցը համարժեք է եկեղեցու...

Երկրորդ՝ առաջին անգամ էի նման մեծարման արժանանում որպես բանաստեղծուհի...

Երրորդ՝ առաջին անգամ էին իմ բանաստեղծությունները անգիր արել և արտասանում...

Եվ քանի որ ի ծնե անմիջական մարդ եմ՝ հենց այդ մասին էլ խոսեցի, ավելացնելով մայրենի լեզվի իմացության նշանակությունը մարդու կյանքում՝ հայ մարդու կյանքում հայոց լեզվի նշանակությունը, օրինակ բերելով իմ որդուն, որին չորս տարեկան հասակում սովորեցրել եմ հայերեն գրել ու կարդալ, և որն էլ ծայրահեղ անհրաժեշտություն դարձավ և օգնեց իր հետագա մասնագիտական գործունեության բնագավառում:

Վերջում ինձ խնդրեցին գրություն թողնել պատվավոր հյուրերի մատյանում և ծաղիկներ նվիրեցին: Հետո բոլորս միասին նկարվեցինք ու միասին շրջեցինք գեղեցիկ ու լուսավոր դպրոցում: Դիտեցինք փոքրիկ թանգարանը, ուր պահվում են հայ ընտանիքին հատուկ իրեր՝ խնոցի, երկանք, կուժեր, հարսի տարազ, գորգ, կարասի և այլն:

Իրար հրաժեշտ տալուց առաջ ինձ հյուրասիրեցին թեյով և հայ մայրիկների պատրաստած համեղ խմորեղենով:

Ես իմ ձեռագրով գրած բանաստեղծությունը թողեցի թանգարանում, անհարմար զգալով, որ դպրոցին նվիրելու համար հետս թանգարանային իր չեմ բերել և ասացի այդ մասին: Որին ի պատասխան դպրոցի տնօրենը ժպտալով պատասխանեց, թե. «Այդ ձեռագիրը կլինի մեր թանգարանի լավագույն նմուշներից մեկը...»:

Ահա այսպես սկսվեց և հուսամ, դեռ կշարունակվի իմ հանդիպումը ռուսական սփյուռքի հայկական կրթօջախներից մեկում՝ ԱՊԱԳԱՅԻ հետ, քանի որ այդ բալիկների ձեռքում է նույն սփյուռքի հայ համայնքի ապագան...



հանրապետության մեջ միակ դպրոցն է, որտեղ հայոց լեզու են դասավանդում: Եվ այնտեղ շաբաթ օրերին էլ են պարապմունքներ լինում...

Դպրոց ու... առանց մանուկների ծայրի՞...

Մտամոլոր կանգնում եմ դռան առջև, չհամարձակվելով այն հրել ու մտնել: Մի րոպե անց դպրոցի դուռը բացվում է ու ինձ դիմավորում են երեք ժպտաղետ ուսուցչուհիներ: Նրանք տեսել էին ինձ արտաքին դիտարկումների էկրաններին, որ դպրոցի անվտանգությունն են ապահովում, և շտապել էին ընդառաջ: Ես ներկայացա հյուրընկալներին և հետևեցի նրանց:

Դպրոցի շքամուտքը ընդարձակ էր, միջանցքը՝ նույնպես: Ինձ ուղեկցեցին տնօրենի առանձնասենյակը: Պարզվեց, որ դիմավորողներից մեկը դպրոցի տնօրենն է՝ Անժելա Մանուկյանը, երկրորդը՝ ուսմասվարը՝ Ալլա Ավագյանը, իսկ երրորդը՝ հայոց լեզվի ուսուցչուհին, որի նախաձեռնությամբ էլ ես հրավիրվել էի:

Հասկացա, որ դասի ժամ է, դրա համար էր դպրոցում լուռ:

Ճիշտն ասած, նման միջոցառման ես առաջին անգամ էի հրավիրվել և գաղափար անգամ չունեի, թե ինչ պիտի ասել կամ անել:

Համենայն դեպս, հետս վերցրել էի իմ գրքերից մի-մի օրինակ և թերթիկի վրա ձեռագրով գրել լեզվի մասին իմ մեկ բանաստեղծությունը Համշենի բարբառով և գրական հայերենով:

Եվ, քանի որ դաս էր ընթա-

րին առաջարկեց բացել դասագրքերը և կարդալ տնային առաջադրանքը: Դա շատ պարզ մի տեքստ էր բնության մասին:

Երեխաները հեթո՞վ կարդում էին առաջարկվող հատվածները: Կարդում էին վարժ, բայց ռուսական առոգանությանը: Շատերը չէին կարողանում արտաբերել «հ» և «ջ» հնչյունները: Դա տխրեցրեց ինձ, քանի որ հասկացա, ցավոք սրտի, հայերենը այս մանուկների համար դարձել է օտար լեզու: Իրենցը՝ և օտար:

Կարողացա զգացմունքներս թաքցնել և ուսուցչուհու թույլտվությամբ սկսեցի պարզ հարց տալ երեխաներին՝ տանը հայերեն խոսու՞մ են:

Պարզվեց, որ տասնհինգ մանուկներից միայն երկուսի տանն են հայերեն խոսում, այն էլ՝ տատիկ-պապիկները:

Երեխաներից շատերը եկվոր էին, ոմանք Հայաստանից, ոմանք Ադրբեջանից, ոմանք Վրաստանից: Երկու երեխա կար «բնիկ», որոնց ապուպայերը Տրապիզոնից գաղթածներ էին, բայց նրանք էլ տանը ռուսերեն են խոսում, չնայած բարբառը հասկանում են:

Ես լսել էի, որ ներկայումս Ռուսաստանի հայկական դպրոցներում բոլոր առարկաները դասավանդվում են ռուսերեն: Նախկինում այլ էր, եթե հայկական դպրոց էր, ուրեմն քիմիան էլ, ֆիզիկան էլ, աշխարհագրությունն էլ, աստղագիտությունն էլ հայերեն էին դասավանդվում: Հիմա այդպես չէ: «Հայկական դպրոց» է կոչվում այն դպրոցը,



ների հետ միասին իմանան նաև մայրենին:

Հա՛, նշեմ, որ ես իմ խոսքը ասում էի նախ գրական հայերեն, հետո ռուսերեն և Համշենի բարբառով:

Երեխաներն արտակարգ գեղեցիկ էին: Մեզները շիկահեր ու կապուտաչվի բալիկներ կային: Հազնված էին շատ կոկիկ ու խնամքով: Աղջիկների սանրվածքը միանման էր, գլուխների վրա հավաքված մազերի փնջիկով: Դաստիարակված էին, զուսպ, հայեցի ամաչկոտությամբ: Բայց բացվեցին, երբ սկսեցի նրանց հարցեր տալ ապագայի մասին: Բոլորն անխտիր ասացին, թե ինչ են ուզում դառնալ: Մի մանչուկ կար, որ ասաց, թե զինվորական պիտի դառնա, որ գնա հայրենիքը պաշտպանելու: Երբ հարցրեցի, թե որտեղից են եկել, պարզվեց որ... Հայաստանից...

Մտածելու տեղիք տվեց նրա պատասխանը...

Երեխաները կարծես թե սիրեցին «նոր ուսուցչուհու» անմիջականությունը: Խնդրում էին

նը և իմ լեռնային ծննդավայրի տեսարանները:

Հուզմունքս չանցած՝ իրար հետևից աշակերտները սկսեցին արտասանել... իմ բանաստեղծությունները: Առոգանությամբ, գեղեցիկ: Այնքան գեղեցիկ, որ մի փոքր ապշած էի (անկեղծ եմ ասում), որ ես այդպիսի լավ գործեր եմ ստեղծել: Երեխաներից մեկը՝ մի պատանի, արտասանելիս մի պահ տեքստը մոռացավ: Ներողություն խնդրեց և սկսեց սկզբից: Դա շատ հուզեց ինձ...

Հետո ես նրան առանձին խոստովանեցի, որ ես իմ գրածներից ոչ մի տող անգիր չեմ կարողանում հիշել: Նա բռնեց ձեռքս և ասաց.

- Ես էլ եմ բանաստեղծ դառնալու...

Արտասանեցին մոտավորապես երեսուն բանաստեղծություն հայերեն և երեքը՝ ռուսերեն: Որից հետո հնչեցին մայրենի լեզվին նվիրված հայ դասականների ստեղծագործությունները:

Միջոցառման վերջում ընկեր Արփենիկը պաշտոնապես ներ-

ՌՈՒՄԱԽՈՍ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՆԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ

Կրասնոդարի երկրամասի հայաշատ Նովոռոսիյսկ քաղաքում 1989 թվականից գործում է Ռուսաստանի հայերի միության «Լույս» կրթամշակութային հասարակական կազմակերպությունը: Իր գործունեության գրեթե 3 տասնամյակի ընթացքում հասարակական, մշակութային, բարեգործական գործունեությունից զատ այն իրականացնում է կարևոր առաքելություն՝ կազմակերպում է հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության անվճար ուսուցում, ինչը նպաստում է նոր սերնդի հայեցի դաստիարակությանը:

«Լույսի» գործունեության առաջին իսկ տարում բացվել է կիրակնօրյա դպրոց: Հաջորդող տարիներին մեկօրյա ուսուցման տարբերակով հայոց լեզվի ուսուցման դասընթացներ են կազմակերպվել քաղաքի մի քանի հանրակրթական դպրոցներում: Այսօր Նովոռոսիյսկի Վոստոչնի (Արևելյան) շրջանի N 7 գիմնազիայում (ուսուցիչ՝ Ադելինա Քիրաշյան), N 32 միջն. դպրոցում (Աստղիկ Գալուստյան), Ցենտրալնի (Կենտրոնական) շրջանի N 5 (Աստղիկ Գալուստյան), N 8 (Աելիտա Միրաքյան), N 20 (Վերա Իսրայելյան) գիմնազիաներում, գյուղերի և գյուղավանների՝ Վերխնեբականսկիի N 14 (Լիլիթ Հովհաննիսյան), Գայդուլի N 23 (Արփինե Այվազյան), Ռասկայայի N 24 (Արև Բալայան), Նատուխասկայայի N 26 (Միտուշ Դազարյան) հանրակրթական դպրոցներում, Նովոռոսիյսկի Պրիմորսկի (Ծովափնյա) շրջանի N 28 (Ադելինա Քիրաշյան) և N 40 (Աելիտա Միրաքյան) դպրոցներում և սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցում (ուսուցիչ՝ Աննա Պողոսյան) անցկացվում են հայոց լեզվի ուսուցման ֆակուլտատիվ դասընթացներ, ինչը երեխաներին հնարավորություն է տալիս սովորել հայոց լեզու և ծանոթանալ հայ ժողովրդի պատմությանը, հայկական մշակույթին և ավանդույթներին, հայկական տոներին, նշել դրանք ռուսական միջավայրում:

Տարբեր տարիներ քաղաքի այլ դպրոցներում էլ (NN 11, 17, 18, 19, 21, 27, 33) են անցկացվել հայոց լեզվի դասեր: Այսօր այդ դպրոցներում դասերը դադարեցվել են աշակերտների սակավության պատճառով: Հայ երեխաների հայեցի դաստիարակման և կրթման գործում մեծ ներդրում ունեցող ուսուցիչների՝ Կարինե Իսահակյանի, Իրինա Կարապետյանի, Կարինե Դարիբյանի, Թամարա Ավետիսովայի, Լիլյա Հովհաննիսյանի, Լուսինե Պողոսյանի, Լուսինե Իսահակյանի, Արեգա Գաբրիելյանի աշխատանքն այսօր շա-



րունակում են նորերը: «Լույս»-ում երկարամյա մանկավարժական գործունեություն են ծավալել Աելիտա Միրաքյանը և Միտուշ Դազարյանը:

Մանկավարժների աշխատանքը տարիներ շարունակ վերահսկում է «Լույսի» փոխնախագահ Ալլա Պարցիկյանը, մեթոդական աջակցությունն ապահովում է Աննա Պողոսյանը:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա շեմին մանկավարժները քննարկում են կատարելիք աշխատանքները, կազմում աշխատանքային ծրագիր՝ համագործակցելով Կրասնոդարի երկրամասի հայկական համայնքի տարածքային բաժնի, ՀՀ ԿԳՆ և սփյուռքի նախարարության կրթության բաժնի հետ, աշակերտներին ապահովում դասագրքերով, ուսուցիչներին՝ մեթոդական ձեռնարկներով, անհրաժեշտության դեպքում դիմում ՀՀ սփյուռքի նախարարություն՝ անվճար դասագրքեր և ձեռնարկներ ստանալու համար, գործածում նաև տեղի մանկավարժների ստեղծած դասագրքերը: Այս ամենն արձանագրվում է «Լույսի» կողմից, ինչպես նաև լուսաբանվում Նովոռոսիյսկի «Լյուս Լույս» թերթում:

2016 թ. սեպտեմբերից են նույնպես հայոց լեզու են դասավանդում Նովոռոսիյսկ քաղաքի Ռասկայա գյուղավանի N 24 միջն. դպրոցում: Նախորդող տարիներին այս գյուղավանում հայոց լեզու դասավանդել են Իրինա Կարապետյանը (մինչև 2013 թ.) և Արփինե Այվազյանը (2013-2016 թթ.): Ուսուցիչների մասին ջերմորեն են խոսում գյուղի այն բնակիչները, ում երեխաները հաճախել են հայոց լեզվի դասերին: Նրանց հիշողություններում վառ է մնացել Իրինա Կարապետյանի կազմակերպած բաց դաս-միջոցառումը՝ նվիրված հայկական հարսանիքի արարողակարգին: Դասն անցկացվել է դպրոցամերձ այգում: Ուսուցչուհի Արփինե Այվազյանի աշակերտները 2014-2015 և 2015-2016 ուստարիներին մասնակցել են երկրամասում անցկացվող հայոց լեզվի օլիմպիադաներին: 2015-2016 ուստարում Բելորեչենսկում անցկացված օլիմպիադա-

յին մասնակցած 3 աշակերտներից Մանե Մալեդյանը և Դիանա Սերոբյանը գրավել են 2-րդ և 3-րդ տեղերը, իսկ Թինա Սերոբյանն արժանացել է դիպլոմի: Ուսուցչուհի Արփինե Այվազյանը շնորհակալագիր է ստացել «Խաչքար» դպրոցի կողմից: Մեր գրույցի ընթացքում խոսելով իր կատարած աշխատանքի մասին, ուսուցչուհի Այվազյանը ներկայացրեց իր վարած բաց դասերը՝ նվիրված հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակմանը և մայրության տոնին, որոնց մասնակցել են նաև աշակերտների ծնողները, հայոց լեզվի ուսուցիչները:

Ռասկայայան հայաշատ գյուղավաններից է: Այսօր դպրոցի 1410 աշակերտներից 190-ը հայ են, սակայն հայոց լեզվի դասերին հաճախող հայ երեխաների թիվը երբեք չի գերազանցել նրանց 30 %-ը:

Ունենալով 17 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ (դասավանդել են Երևանի N 191 և N 162 դպրոցներում, հրապարակել տասից ավելի գիտամեթոդական, մանկավարժական հոդվածներ), ես անտեղյակ էի բոլոր այն խնդիրներին, որոնք առկա են մեկօրյա հանդիպումով հայոց լեզվի դասավանդման գործընթացում: Դրանք ծառացան անմիջապես, երբ խմբում միաժամանակ գործ ունենցա հայերենի իմացության տարբեր մակարդակի, տարբեր տարիքի երեխաների հետ: Միևնույն խմբում սովորում են և՛ նախկին հայաստանցի աշակերտներ, ովքեր գրաձանաչ են և դասընթացին մասնակցում են հայոց լեզվի իմացությունը խորացնելու նպատակով, և՛ ռուսախոս երեխաներ, ովքեր հայերեն մի քանի բառ գիտեն, այն էլ բարբառային: Հայոց լեզու սովորում են նաև ռուս և եզդի երեխաներ: Դասընթացին հաճախում են 7-13 տարեկաններ, ինչը նույնպես անհնար է դարձնում ընդհանուր ձևակառույց աշխատելը: Այդպիսով, միևնույն խմբում ձևավորվել է 3 ենթախումբ, ինչը զրեթե անհատականացնում է երեխաների հետ տարվող աշխատանքը:

2016 թ. նոյեմբերի 28-29-ին Կրասնոդար քաղաքում կազ-

մակերպված տարածաշրջանային համաժողովին, ներկայացնելով Նովոռոսիյսկ քաղաքի «Լույս» հ/կ-ը՝ ես և իմ գործընկեր Աելիտա Միրաքյանը հանդես եկանք գեկույցներով «Հայոց լեզվի ուսուցման խնդիրները ռուսախոս միջավայրում» և «Ռուսախոս միջավայրում հայեցի կրթության և դաստիարակության գործում հայ մանկավարժների փորձը» թեմաներով: Համաժողովում ակնհայտ դարձավ, որ երկրամասում հայոց լեզվի դասընթացների արդյունավետությանը խոչընդոտող նույն խնդիրներն առկա են գրեթե բոլոր համայնքներում:



Դրանք հաղթահարելու առաջին գրավականը ուսուցիչների խանդավառ աշխատանքն է, ցանկությունը սովորեցնելու երեխաներին իրենց մայրենին, դաստիարակելու հայրենասիրություն և սերմանելու պատմական հայրենիք վերադառնալու ձգտում, ծանոթանալու նրա անցյալին և ներկային, դառնալու հայրենիքի ապագայի կերտողը:

Դասին նախապատրաստվելիս հետամուտ են լինում հետևյալ նպատակների իրականացմանը՝ 1) ուսուցողական, որի ընթացքում սովորում ենք

տանքների կատարմամբ, օրինակ՝ ծանոթանալով գրերի գյուտի պատմությանը, դիտելով Մատենադարանում պահվող ձեռագրերի մասին տեսանյութեր, աշակերտներին սովորեցնելու պատկերել թռչնազոր, որոնցով Թարգմանչաց տոնի առթիվ գեղազարդեցինք մեր պատրաստած բացիկները և նվիրեցինք հայոց լեզվի ուսուցիչներին:

Աշակերտներս մեծ բավականություն են ստանում, երբ դասը զուգակցվում է ստեղծագործական աշխատանքներով: Ծանոթանալով հայկական գրերի պատմությանը, տեսակնե-

րին, մետաքսե թելերով հյուսեցինք փոքրիկ գորգ: Խոսելով տոների ժամանակ ազգային տիկնիկների օգտագործման մասին երեխաներով պատրաստեցինք Նուրի՝ անձրևի հարս տիկնիկը: Անդրադառնալով եկեղեցական տոներին՝ պատկերեցինք այն տոները, որոնք հայերը շարունակում են նշել ռուսախոս միջավայրում՝ Ջատիկ, Վարդավառ և այլն:

Լեզվի ուսուցման գործընթացում հաջողություններ ունենալու համար բավարար չէ ներդասարանային աշխատանք ծավալելը: Դասից դուրս համա-



կարդալ և գրել, ծանոթանում քերականական գիտելիքների, 2) բանավոր խոսքի զարգացում, որի ընթացքում հարստացնում ենք բառապաշարը, ազատվում խոսքի հոգեբանական կապանքներից, 3) ծանոթացում հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, տոներին և ավանդույթներին: Ուսուցումը զուգակցվում է ձեռքի աշխա-

կատախան միջավայրի և նպաստող պայմանների բացակայությունը հանգեցնում են նրան, որ երեխաները դպրոցում, բակում, նամակագրության մեջ շարունակում են հաղորդակցվել ռուսերենով: Եվ որպեսզի հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները առօրյայում կիրառելու համար



պարարտ հող ստեղծվի, անհրաժեշտ է երեխաներին մասնակից դարձնել բազմաբնույթ միջոցառումների:

ՈՂ-ում նոյեմբերի 4-ին նշում են ազգային միասնության օրը: Նովոռոսիյսկ քաղաքում արդեն 5-րդ տարին է, ինչ այդ օրն անցկացվում է «Многообразие народов» մասնակապտանեկան միջոյթ-փառատոն նախադպրոցական և դպրոցական հաստատոյթունների մասնակցութամբ: 2016 թ. Ռանակայա գյուղավանի N 6 մանկապարտեզը փառատոնին ներկայացրել էր Հայաստանը և հայ ժողովրդի ավանդոյթները: Համագործակցելով մանկապարտեզի մանկավարժների հետ, աջակցելով միջոցառման ծրագրի կազմմանը և բեմադրմանը, հայոց լեզվի դասընթացին մասնակցող երեխաներով պատրաստեցինք մեծադիր վահանակներ՝ Արարատի և ազգային զարդանախշերի խճանկար վիրտաժներ, ինչպես նաև ինքնաշեն թոնիի՝ լավաշ թխելու արարողոյթունը ներկայացնելու համար: Միջոցառմանը ելոյթ ունեցան մանկապարտեզի հայ սաները և ծնողները: Պարուսոյց Հռիփսիմե Բաբայանը բեմադրել էր «Քոչարին», որը սիրով պարում էին մանկապարտեզի սաներն ու դաստիարակները: Ազգային տարազը տրամադրել էր «Լույս»-ը: Պարի ժամանակ ցնծում էր հայ և օտարազգի հանդիսատեսը: Արդյունքում հաղթողների շարքում էր նաև N 6 մանկապարտեզը: Ցնծում էին նաև իմ սաները:

Մեծ ոգևորութամբ էին երեխաները նախապատրաստվել Ամանորի միջոցառմանը, որին պետք է հանդես գային «Ամանորյա հեքիաթը» բեմականացմամբ և ուրախացնեին «Լույսի» հայոց լեզվի դասընթացի մասնակից շուրջ 200 երեխայի: Պատմելով հայկական ամանորյա տոնական ծառի պատմութունը, ներկայացնելով մեր ավանդոյթները՝ ազգային երգ ու պարի ուղեկցութամբ անմոռանալի դարձրին հայ երեխաների հանդիպումը Ձմեռ պապի և Չլունանուշի հետ: Բոլորը ամանորյա նվերներ ստացան «Լույսի» կողմից:

Յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին Նովոռոսիյսկ քաղաքի հայկական համայնքը հայոց Ցեղասպանութան զոհերի հիշատակին նվիրված միջոցառմամբ է հանդես գալիս, որին մասնակցում են հայ դպրոցականները, նաև օտարազգիներ:

Առավել մեծ պատասխանատւութամբ ենք նախապատրաստվում հայոց լեզվի համահայկական օլիմպիադային, որի տարածքային փուլն արդեն 5-րդ տարին է անցկացվում է Կրասնոդարի երկրամասում: Պատվով հանդես գալու համար ամրապնդում ենք գիտելիքները հայ ժողովրդի պատմութունից և մշակոյթից, սովորում բանաստեղծութուններ և երգեր: Փորձում ենք նաև կապեր հաստատել Հայաստանի մանկապատանեկան ամսագրերի հետ: Ուրախ եմ, որ որդիս՝ Կարեն Բալայանը, որը սովորում է 7-րդ դասարանում, ռուսախոս միջավայրում իր առօրյայի և ձեռքբերումների մասին նամակ է ուղարկել Երևանի «Արևածաղիկ» ամսագրին, և շուտով այն լույս կտեսնի:

Մայրենի լեզվի, պատմութան, ազգային ավանդոյթների իմացութան շնորհիվ հայկական համայնքն ավելի է հզորանում օտարութան մեջ, դառնում է միասնական, համերաշխ, հարազատ է մնում ազգային արմատներին:

ԱՐԵՎ ԲԱԼԱՅԱՆ

Նովոռոսիյսկի «Լույս» հ/կ-ի հայոց լեզվի ուսուցչուհի

ՈՒԺԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ռուսաստանում հայեցի կրթութան զարգացման նախադրյալները

Խոստովանենք թե ոչ, Սփյուռքում հայերենը դուրս է հանրակրթութան դաշտից և վերաբերում է լրացուցիչ կրթութանը: Սակայն լրացուցիչ կրթութունը ևս պետք է լինի համակարգված, նպատակաշին, վերջնական արդյունքի շոշափելի տեսլականով: Հայկական կրթական դաշտը Սփյուռքում պետք է լինի բոլոր ուսուցիչների համար ընդհանուր, միասնական ծրագրերով, դասագրքերով, գիտելիքների փոխանցման մեթոդաբանութամբ, գնահատման չափորոշիչներով: Հայեցի կրթութան բոլոր օղակները պետք է ունենան հստակ ազգային գաղափարախոսութուն, աշխատանքի հայրենամաստ արդյունք: Պետք է կարողանալ միախուսել ցայուցրիվ ստեղծագործական աշխատանքները, շաղկապել, հանրագումարի բերել տասնամյակների փորձը: Ելեւելներից ամենատաղանդավորները միավորել համանվագում, որի նվագավարը անկասկած պետք է լինեն Հայրենիքի լավագույն մասնագետները: Ուկրաինայում ծրագրեր ստեղծվեցին, Կրասնոդարում՝ դասագրքեր, Մոսկվայում ուսումնական նյութեր... Պետք է կարողանանք ճանաչել, ընդունել միմյանց, ստեղծել համամասնականը:

Երկրորդ կարևոր ասելիքս այն է, որ հայկական դպրոցը կամ մշակոյթի կենտրոնը, և նույնիսկ այն պետական կրթական օղակները, որտեղ մեզմիջ շատերը աշխատում են, չպետք է գոյատևեն որպես հայոց լեզվի կամ հայկական պարի խմբակների կացարան: Այն պետք է լինի հայեցի ապրելակերպի և մտածելակերպի ձևավորման և պահպանման օջախ, ուր պարզաբանվում և արժևորվում են հայ ժողովրդական ավանդութներն ու սովորութները, հայ ժողովրդի պատմութան և մշակոյթի առանցքային թեմաները և կերպարները, գործում են տարբեր տարիքների և խավերի համար ստեղծված ակումբներ՝ պարբերական երեկոյթներով ու ցերեկոյթներով, վիկտորինաներով, հանդիպումներով, խաղերով, համերգներով, կինոդիտումներով և հարցազրույցներով: Ցոնվում են բոլոր պետական և եկեղեցական տոները, մասնակցում են համահայկական բոլոր միջոցառումներին:

Դպրոցի հիմնական նպատակները պետք է լինեն.

✓ հայ ժողովրդի դեսպանների դաստիարակումը, որոնք աշխարհին կներկայացնեն մեր մշակոյթն ու քաղաքակրթութունը:

✓ Հայկականութան պահպանումը արժանապատվրեն: Երբեք չպետք է ներկայացնել մեր երկիրը որպես խեղճ, անօգնական, շրջափակված, դատարկ: Այլ՝ իր ազատութան համար մարտնչող, կայացման վերընթաց ճանապարհով բարձրացող, դժվարութունները համառորեն հաղթահարող հազարամյա և հավերժական Հայաստան:

✓ Հստակ պատկերացում տալ՝ համաշխարհային քաղաքակրթութան մեջ հայոց պատ-

մութան և մշակոյթի ունեցած դերի մասին:

✓ Դաստիարակել և կրթել շատ զարգացած և լուսավորված սերունդ, որը տեղյակ է ժամանակակից գիտութան բոլոր ոլորտներին և կարող է հայոց պահանջատիրութունը ներկայացնել աշխարհին: Որը որոնում է հայ ժողովրդին հուզող բոլոր հարցերի պատասխանները:

✓ Ձևավորել Ռուսաստանի արժանավոր, կայացած, ապագայում նաև ազդեցիկ քաղաքացիներ, որոնք պատրաստ են և կարող են օգնել հայրենիքին:

✓ Առաջացնել հայրենադարձութան ցանկութուն:

Երրորդ հանգուցային կետը Ռուսաստանում հայեցի կրթութան նկատմամբ պետական հոգածութան անհրաժեշտութան տարփողումն է: ՌԴ Սահմանադրութան 68-րդ հոդվածը փաստում է մայրենի լեզվի ուսուցման իրավունքը: Կնքված են բազմաթիվ միջպետական համաձայնագրեր Հայաստանի Հանրապետութան կրթութան և գիտութան նախարարութան և Ռուսաստանի Դաշնութան կրթութան և գիտութան նախարարութան միջև կրթութան ոլորտում համագործակցութան մասին: Ես շատ համառոտ քաղվածք եմ արել:

1996 թվականի հունիսի 28
✓ Կողմերը երաշխավորում են Հայաստանի Հանրապետութունում ռուսական համայնքի և Ռուսաստանի Դաշնութունում հայկական համայնքի մշակոյթի ազատ և իրավահավասար զարգացումը:

✓ Կողմերը բարենպաստ պայմաններ կստեղծեն նրանց ազգային ինքնատիպութան, մշակոյթի, լեզվի պահպանման, հոգևոր և կրոնական կարիքների իրագործման համար:

✓ Կողմերը կնպաստեն ռուսաց լեզվի ուսուցմամբ Հայաստանի Հանրապետութունում և հայոց լեզվի ուսուցմամբ Ռուսաստանի Դաշնութունում հանրակրթական հիմնարկների, ինչպես նաև միջնակարգ, բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատութուններում դասարանների և բաժինների ստեղծմանը:

2002 թ. հունվարի 9

✓ Հայաստանի Հանրապետութունում և Ռուսաստանի Դաշնութունում տրվող գիտութունների թեկնածուի և գիտութունների դոկտորի դիպլոմներին, դոցենտի և պրոֆեսորի ատեստատների համարժեքութան ճանաչումը և հաստատումը կատարվում են Հայաստանի Հանրապետութան օրենսդրութամբ և Ռուսաստանի Դաշնութան օրենսդրութամբ սահմանված ընդհանուր կարգի հիման վրա:

2002 թ. փետրվարի 19

✓ Կողմերը կխրախուսեն Հայաստանի Հանրապետութան և Ռուսաստանի Դաշնութան հրատարակչութունների, գրավաճառ կազմակերպութունների և պոլիգրաֆիական ձեռնարկութունների միջև ամնիջական ստեղծագործական և գործարար կապերի հաստատումը, որոնց կոնկրետ պայմաններն ու ձևերը կսահմանվեն բուն

մասնակիցների կողմից, այդ թվում՝ առանձին համաձայնագրերի և պայմանավորվածութունների միջոցով:

2006 թ. դեկտեմբերի 5

✓ Կողմերը կհամագործակցեն հեռուստատեսութան և ռադիոհաղորդումների բնագավառում: Այդպիսի համագործակցութան կոնկրետ հարցերը կկարգավորեն երկու երկրների շահագրգիռ գերատեսչութունների և կազմակերպութունների միջև կնքված համաձայնագրերով:

✓ Կողմերը կաջակցեն համագործակցութունը արխիվային գործի բնագավառում հաստեղ միջոցառումներ անցկացնելու, աշխատանքային փորձի, արխիվային նյութերի, գիտամեթոդական գրականութան, մասնագետների փոխանակումների միջոցով:

✓ Կողմերն աջակցում են կինեմատոգրաֆիայի բնագավառում իրենց պետութունների շահագրգիռ նախարարութունների, գերատեսչութունների, կազմակերպութունների և հաստատութունների միջև համագործակցութանը հետևյալ ուղղութուններով.

1. ռուսական և հայկական կինոարվեստի մասսայականացում,

2. Կողմերի պետութունների տարածքներում կազմակերպվող միջազգային փառատոներին փոխադարձ մասնակցութուն՝ համապատասխան դրամայ կանոնակարգի,

3. կինոնկարների համատեղ ստեղծում և թվայնացում, ինչպես նաև կինոնկարների փոխանակում:

Այս ամենը գոյութուն ունի թղթի վրա որպես օրենք և այս ամենը իրականացվում է ՀՀ կողմից Հայաստանում: Այս ամենը, եթե չի իրականացվում այստեղ, ապա մեղավոր ենք միայն մենք, որ ոչ միայն պահանջատեր չենք, ոչ միայն անտարբեր ենք մեր ազգային արժեքների նկատմամբ, այլև պատեհ և անպատեհ ստորադասում ենք այդ արժեքները օտարին: Գերազանցապես հազարավոր հայ ընտանիքներով բնակեցված բազմաթիվ բնակավայրերում գործող ռուսական հանրակրթական դպրոցներում հայոց լեզվի ոչ միայն դասացուցակային ժամեր, այլև խմբակներ չկան: Ոչ այն պատճառով, որ պետական օղակները չեն թույլատրում, այլ որովհետև ծնողներն ու երեխաները չեն ցանկանում ուսումնասիրել մայրենի լեզուն: Սա է ամենամեծ ողբերգութունը, որ պետք է լինի Սփյուռքի նախարարութան հոգածութան հիմնական առարկան: Ելքը կգտնվի, եթե որոնվի համառորեն:

Եվ այս ամենաբարդ թնջուկից ամնիջականորեն քիտում է ասելիքիս չորրորդ մասը: Այն վերաբերում է կրթական բնագավառի առանցքային կերպարին, շարժիչ ուժին:

Այն հասարակութունը, որը կարևորում է մեծարում է իր ուսուցիչներին, կազմակերպված և զարգացած է: Վերջերս համացանցում ճապոնական ուսուցիչների մասին մի պատ-

մութուն էր շրջանառվում: Նա հատուկ կրծքանշան է կրում և կյանքի բոլոր ոլորտներում արժանանում պատվի և մեծարման: Դժվար չէ գուշակել, թե ինչու է այդ երկիրը բոլոր առումներով օրինակելի:

Ուսուցչին հանձնարարված է սերունդների կրթման և ձևավորման հանձարեղ գործը: Որպեսզի մի բան կարողանաս սովորեցնել երեխային, դու պետք է առնվազն 10 բան իմանաս, իմանաս հիմնավորված և խորը, ուսումնասիրես պատճառն ու հետևանքը, հարակից բոլոր գործոնները, եթե ուզում ես, որ քեզմից սովորեն, քեզ լսեն և գան քո հետևից: Ամեն դասատու չէ, որ ուսուցիչ է:

Սփյուռքի հայոց լեզվի ուսուցիչը ավելին է, քան մի այլ առարկայի ամենատաղանդավոր ուսուցիչն անգամ, նա Մաշտոցի սուրբ գործի երդվյալ ժառանգորդն է: Նրանից պահանջվում է.

✓ բարձր պահել հայոց լեզվի և հայկականի վարկը,

✓ գերազանց տիրապետել մայրենի լեզվին,

✓ տիրապետել այն լեզվին, որի տիրապետութան տարածքում ապրում է,

✓ իմանալ հայ ժողովրդի պատմութան առանցքային, վճռորոշ անցքերը, դրանք ներկայացնել հրապուրիչ և համոզիչ, անպայման այն երկրի պատմութան զուգահեռներով, որի քաղաքացին է,

✓ ունենալ նորագույն իմտերակտիվ մեթոդներ գործածելու հմտութուններ,

✓ վարակել հայրենիքին նվիրվածութամբ:

Իսկ որպեսզի ուսուցիչը ձգտի և հասնի մասնագիտական կատարելութան, պետք է լինի պետութան, համայնքի և եկեղեցու ուշադրութան և հոգատարութան կենտրոնում: Ուսուցչի մտքի թռիչքի համար թևեր են պետք, երեխաներին իր թևերին տանելու համար ամուր թևեր են պետք: Ամուր թևերը պետք է ունենան խիտ փետուրներ, իսկ այդ փետուրները գոյանում են այն հույսերից և հավատից, որ մերշնչում են մեր պետութունը (ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԱՐՑՄԱՆ), Հայ Առաքելական հավատը, Սփյուռքը:

Ինչ վերաբերում է մեր «Արմատ» դպրոցին, ես մաղթում եմ, որ նյուսներն էլ աշխատեն այսպիսի պայմաններում: Գերաշնորհ Մովսես Սրբազանի օրինութամբ և բարերար Կարեն Գրիգորյանի աջակցութամբ 2007թ. հիմնադրել ենք դպրոցը, այժմ այն կայացած հայկական կրթօջախ է՝ իր 350 աշակերտներով, մեկ տասնյակից ավելի ուսուցիչներով, երիտասարդ, արհեստավարժ դեկավարով (Ալեքսանդր Բարսեղյան) և փորձառու, վաստակաշատ տնօրենով (Տեր Սարգիս Ավագ քահան Թաշջյան):

Ես երազում եմ, որ ևս 10 տարի հետո այն դառնա Հարավային Ռուսաստանի կայացած հայագիտական կենտրոն:

ԵՐԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հարավային Ռուսաստանի
Հայոց թեմի «Արմատ» դպրոցի
ուսմասվար

ՆԱՅՐԱ ԿԴԱՌՆԱՐ 100 ՏԱՐԵԿԱՆ

Հայրս՝ Արսեն Հակոբի Յալանուզյանը, մահացավ 92 տարեկան հասակում, 2009թ. օգոստոսին: Ս.թ. մարտի 27-ին նա կրառնար 100 տարեկան: Ծնվել է Արխագիայի Գուլրիփշի շրջանի Ազանթա (Աբլուխվարա) գյուղում: Նրա հայրը 10-12 տարեկան է եղել, երբ Յալանուզյանը



Արսեն Յալանուզյանը՝ բանակում, 1940 թ.

յանների ընտանիքը Սև ծովի առափնյա Տրապիզոնի նահանգի Սամսունի գավառի Զարշամպա գավառակի Կապաջկի գյուղից գաղթել է Աբխազիա: Ենթադրաբար դա եղել է 19-րդ դարի 80-ական թվականներին: Հայրս սկզբնական կրթությունն ստացել է Աբլուխվարայի 8-ամյա դպրոցում, հետո՝ Սուխումի նկարչական ուսումնարանում: Մեծ հայրենական պատերազմի սկսվելուն պես հայրս, որ նոր էր զորացրվել ժամկետային զինծառայությունից, կրկին զորակոչվում է: Պատերազմից հետո Արսեն Հակոբի Յալանուզյանն ուսուցչություն է անում հարազատ գյուղի դպրոցում՝ դասավանդելով նկարչություն և ֆիզկուլտուրա: Ուսումնարանում ստացած կրթությունը նրան շատ է պետք գալիս: Մանուկ հասակից ես նրան հիշում եմ նկարակալի առջև կեացած նկարելիս: Նկարում էր շատ և մեծ բավականությամբ: Սովորություն ուներ իր ջրաներկ և մատիտանկար աշխատանքները նվիրել մոտիկ ու հեռու հարազատներին, հարևաններին, ծանոթ ու անծանոթ մարդկանց, հատկապես երեխաներին: Մինչև հիմա էլ մեր ընկերներից ու հարևաններից շատերի տանը կան հորս նվիրած գործերը: Իր չափով գրչի մարդ էր նա: Բանակում ծառայելու տարիներից սովորություն էր արել նամակ գրել ազգականներին: Հիշում եմ ինձ ևս հորդորում էր օրագիր պահել դեռ այն ժամանակ, երբ հազիվ երկրորդ դասարանցի էի: Հետագայում շատ ժամանակ էր տրամադրում թոռների դաստիարակությանը, նրանց համար հազար ու մի խաղ ու խորհրդավոր արկած հորինում, արշավի տանում Երևանի մերձակա վայրերը: Պատկերավոր մտածողություն ուներ և հատկապես 1978թ. Երևան տեղափոխվելուց հետո հարազատներին համոզվածությամբ նամակներ էր գրում, նկարագրում երբեմնի երևելի համազրույցներին, նրանց հետ պատահած դեպքերն ու պատմությունները: Հայրս բազմաթիվ գրառումներ է թողել, որոնց մի մասը տպագրվել է «Լույս Համշենի» ամսաթերթի 1992թ. N2 (4)-ում «Զայն համշենական» ամսաթերթի 2004թ. N 3-ում և 2009թ. N 11-12-ում: Հավաքել է նաև համշենական խաղիկներ, որոնցից մի քանի նմուշ տեղ է գտել Հա-

կոբ Գուրունյանի «Համշենահայ բանահյուսություն» գրքում՝ Երևան, «Լույս», 1991թ.:

ԱԲԼՈՒՔՎԱՐԱ

«Եկեք ինձ հետ, ձեզ ցույց տամ մեր գյուղը: Բարձրանանք այն էն պաղ ջրի վերևի բացատը, որտեղից ամբողջ գյուղն է երևում: Մեր գյուղի անունն է Աբլուխվարա, շատ սիրուն գյուղ է՝ տեղը, տեսքը, օդը, ջուրը: Բայց դե ասելով չի, այնտեղ գոնե մի 10 տարի պիտի ապրես, որ հասկանաս, թե ինչ է Աբլուխվարա ասված գյուղը: Սղոց Գաբեդի (Սղոցյան Կարապետ) ասելով՝ Աբլուխվարա նշանակում է երկու ձորի միջակայք, կամ արխագերեն է կամ չերքեզերեն: Շրջակայքում մի քանի գյուղ կա, բայց լավագույնը Աբլուխվարան է»,- գրել է հայրս հարազատ գյուղին նվիրված իր ակնարկում և ասես ընթերցողի ձեռքը բռնած տարել է մի տեսարժան վայրից մյուսը, ծանոթացրել երևելի համազրույցների հետ: Դեռևս իմ պատանության տարիներին մեր գյուղն սկսեց դատարկվել, բնակիչ-

նուզյանը, շատ այլ ազգականներ ու համազրույցներ:

ԳՐՔԵՐԸ

Թեև մեր ընտանիքն ունեւոր չէր, բայց հայրս գիրք գնելու փող միշտ ունենում էր: Մենք գյուղի չափանիշով հարուստ գրադարան ունեցողներից էինք: Այն ժամանակ Երևանում տպագրված հայերեն գրքերը մեկ-երկու ամսից կանոնավորապես հայտնվում էին Սուխումի գրախանութներում: Հայրս նոր գրքերը գնում էր, տուն բերում և անպայման մակագրությամբ նվիրում ինձ կամ կրտսեր քրոջս՝ Կարինեին: Երբ գրքերը շատացան, իր ձեռքով գրապահարան սարքեց: Մի անգամ, առաջին կամ երկրորդ դասարանում էի, պարզվեց, որ գրքերից երկուսի՝ Վ.Ամանյանի «Սևանի ափին» վեպի և Մ.Լերմոնտովի «Ընտիր երկերի» մեր ունեցած օրինակներից ամեն մեկից 40-50 էջ պակասում է, հավանաբար տեխնիկական խտտան է եղել: Գյուղի ամենաընթերցասերը և շատ գիրք ունեցողը Քյուլի Մոնուգի (Քյուլյան Մանուկ) կինն էր՝

ՄԻՐ ԿԵՂԸ
Արսեն Հ. Յալանուզյան

Դիհա ալի միր կեղը միդս ընգավ օ փիս գինա գարողիծա: Գարողիծա ու սալտ մաշտկածը չա յա, մեգին ասուշին բես՝ քարերուն բիլա գարողիծա: Ըհն ալի աճվնուս առաճն ին միր կեղին ճղածկը, ոյդեխ ըմն սրա լիկը մաշտ գլլեր, ճղածուծը ներկետիյու մեծ ընգզնին, միր մակտաբը, մեռելնեծին ղլլիու չայիրը, ոյդեխ օյն ու գորը խաղայկը գու դղոծը հեղ: Աբա տիմածի փեսը, Աշղը հորկուրարեճս՝ Մուճջի Սգըրին (Մուճջյան Մկրտիչ) դնեքուն նեկտիյու չայիրը՝ միր թոպ խաղուշի դեղը: Մեզմա մեծ դղակն ալ հուն կումշա եզ գպծնեյնը գու, բազի ալ փախճեյնը կելլեյնը կումշա կոլին մողի ծուռը խնձերի ծառը, հնոր էզնին հարուն հեճ: Ներկետիյու ծորին ալ մեծ առժի ծառին դազը բաղ ճուր մը գար, ծարվընալնիս փարտիյով թռճայկը գու ճուր խմուշ: Աբա միր յայլումին ընգզնուդը մոռնուշի պոն ա տա...Ըմն աշուն ընդգի սրա գեշտայկը ընգուզ ժողվուշ: Կեղին օտարը փռոնը մողի քարերուն վրըն մեծերը նստեյնը գու հնօ լաֆլմիշ գլլեյնը:

ԿԱՊԱՋԵՎԻԶԻՑ ՄԻՆՉԵՎ ԱԲԼՈՒՔՎԱՐԱ

Արսեն Հ. Յալանուզյան

Պապիս անունը Սարգիս էր՝ Սարգիս Նիկողոսի Յալանուզյան: Եթե մի պահ նայենք Սև ծովի առափնյա հայկական բնակավայրերը պատկերող քարտեզին, որն իր «Համշենահայերի ազգագրություն» գրքում տեղադրել է ազգագրագետ, լուսահոգի Բարունակ Թոռլաքյանը, պարզորոշ կտեսնենք մեր գյուղի տեղադրությունը: Սարգիս պապիս ծննդավայր Կապաջկի գյուղը գտնվում էր Սև ծովի հարավային ափին, Սամսուն քաղաքից ոչ հեռու, Զարշամպայի գավառակում: Ահա թե ինչ է գրում Բ. Թոռլաքյանը. «Անխառն համշենահայ բնակչությանը այս գյուղն ուներ 67 տուն և բաղկացած էր տոհմական թաղերից, որոնցից բազմամարդ էին Քեշիշցոց, Յալանուզցոց, Ավետցոց, Կարապետցոց և Թորոսցոց թաղերը»: Սակայն շուտով Յալանուզյանների բազմամարդ տոհմի ներկայացուցիչ Սարգիս պապս շատ ուրիշ հայերի հետ բռնում է գաղթի ճանապարհը: Խուսափելով բռնի մահմեդականությունը ընդունելուց և անլուր հալածանքներից, համշենահայերի մեծ մասը 19-րդ դարի վերջերից գաղթում է Սև ծովի կովկասյան ափերը՝ Սուխում, Ծեբելդա, Գագրա, Սոչի, Ադլեր, Տուապսե, Նովոռոսիյսկ, Անապա: Մարտ ամսվա վերջին օրերն էին: Ոչ մեծ մի ջերմանակ ձեռքում էր ծովի ալիքներն ու Սամսունից շարժվում Տուապսեի ուղղությամբ: Տախտակամածին խառնիխուռն կիտված բեռների հարևանությամբ մի կերպ տեղավորվել էին մարդիկ ու իրենց հոգնած հայացքները հառել դիմացի մութ անտառապատ ափերին: Կարելի էր վստահ ասել, որ դժբախտությունը հետևում էր մնացել, շուտով ցանկալի ափ էին հասնելու: Երեք հարևան ընտանիք կար նավի վրա, երեքն էլ Կապաջկի գյուղից՝ Քեշիշցի, Յալանուզի և Թորոսի ազգանունով: Նրանք առանց ափսոսանքի թողել էին իրենց տունն ու տեղը, անշարժ գույքը և ճամփա ընկել դեպի ռուսական ափեր:

-Արտին դայի, աջապ գայնո՞նկ բիդի դեղավոյնալ Շափշուկա կեղին, ի՞նձ կա-

(շարունակությունը՝ 7-րդ էջում)



Սուխումի նկարչական ուսումնարանի սաները, կանգնածներից ձախից առաջինը Արսեն Յալանուզյանն է, 1937թ.

ների զգալի մասը տեղափոխվեց Սուխում և այլ բնակավայրեր: Ըստ Հայկական Սովետական Հանրագիտարանի, Գուլրիփշ շրջկենտրոնից 38 կմ հյուսիս-արևելքում գտնվող Աբլուխվարան 1968-ին ուներ 164 բնակիչ, հայեր: Կոլտնտեսականների հիմնական զբաղմունքը ծխախոտի, եգիպտացորենի մշակությունն էր և անասնապահությունը: Գյուղն ուներ 8-ամյա հայկական դպրոց, որտեղ ես և քույրս սովորել ենք Սուխում տեղափոխվելուց առաջ: Գյուղը 1890-ական թվականներին հիմնադրել են Տրապիզոնից, Ջանիկից գաղթած հայերը: Եթե ասեն, որ հայրս մի առանձնահատուկ սիրով էր սիրում իր ծննդավայրը, ոչինչ ասած չեմ լինի: Ավա՛ղ, գյուղի բնակչությունն օրեցօր պակասեց, իսկ վերահաս վրաց-աբխազական պատերազմի տարիներին իսպառ վերացավ: Այժմ արխագիայից հինգերորդ եկեղեցական տոհմին հազիվհազ հաղթահարում են անտառով ու թփուտով ծածկված գյուղատեղին և հասնում գերեզմանոց, որտեղ թաղված է նաև պապս՝ Հակոբ Յալա-

Լուսիկը: Հայրս շտապեց նրանց տուն: Բնական է, երկու գիրքն էլ տիկին Լուսիկն ուներ: Գրքերը մեր տուն բերվեցին, և հայրս 15-20 օր շարունակ արտագրում էր պակասող էջերը, և ի վերջո մենք հնարավորություն ունեցանք ոչ միայն լրիվ կարդալ գրքերը, այլև հարկ եղած դեպքում կարդալու տալ ուրիշներին: Երբ Սուխում տեղափոխվեցինք, մեր ազգականներից ու հարևաններից շատերը հորս խորհուրդ տվեցին, օգտվելով առիթից, որ նոր դպրոց ենք հաճախելու, ինձ ու քրոջս ռուսաց դպրոց տալ, որպեսզի հնարավորությունը մեծանա: Հայրս չէր վիճում, նույնիսկ գլխով համաձայնության նշան էր անում, բայց մտքով անգամ չանցկացրեց, որ մենք կարող ենք հայկականից բացի այլ դպրոց գնալ: Ավարտեցինք Սուխումի 9-րդ հայկական դպրոցը և ընդունվեցինք Երևանի պետհամալսարան:

ԿԱՐԼ ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ

(սկիզբը՝ 6-րդ էջում)

րար գնիս,- անվստահ հարցնում է Սարգիսն իր տարեց հարևանին:

- Ի՞նչ գայնոմ ասիլ, Սարկիս... Դիպ դարի մը չիկա յոր ախաղոս էրգու դղակը էգոն հուզա յո Շափշուկա ալ դեղավոյժոն: Դունմուն շինեծին, մաղազա-գորոք շինեծին, մալ ունին: Հալքատ, ըռոնձ ազատի չի ըլիլ, ամա կարար գնիմ տա դեղավոյժոնկ կու:

Մինչ հարևանները մտահոգ խոսում-ծրագրում էին հետագա անելիքները, մալը հեկալով, ծուխ ու մուր փռելով ծովի վրա, մոտենում էր արդեն պարզորոշ երևացող ափին:

-Արտին դայի, հայրսմն դայր ալ ի՞նչ միլլատ գաբռի աս դեղունը,- հաջորդ հարցն է տալիս Սարգիսը: Արթին դային մի հաղթանդամ, բարձրահասակ, թափ բեղ-մորուքով 60-ն անց մարդ էր Քեշիշցոց ազգատոհմից:

- Հայրսմն դայր ասինկը գաբռին արագա, չարկազ, ուրուս, քիճ-միճ ալ գյուրջի ու հոռում: Մեզ խոսկով ըմըն ջինսն ալ կոլովի գու: Օրի՞ հայծիր, Սարկիս:

-Դո իշտի մաշտը միտկ գնա տա ինձ միլլատ ըռաստ կուկա, տրգըծուտին գլլվի տա հեղվին:


-Գլլվի, գլլվի, օրի բիդի չլվի: Դաջգաստանու բես քեզի ասող չիկա տա լիզուդ փոխա, խաճ մի էշտալ, գռոնկ-հավատկո փոխա: Կարար գնիմ տա հոգ խել մը լալ գլլինկ,- ասում է Արթինը:

Վերը հիշված գաղթի ժամանկ Սարգիս պապիս և Մարիամ տատիս ընտանիքը բաղկացած էր 6 անձից: 4 երեխաներից մեծը Էլմաս կամ Էլմոն անունով մոտ 17 տարեկան դուստրն էր: Ապա հաջորդում էին 3 որդիները՝ 15-ամյա Նշանը, 13-ամյա Հակոբը (հայրս) և 11-ամյա Հովակիմը: Հետագայում ծնվում է երկրորդ դուստրը: Յալանուզ Սարգիսն իր ընտանիքով տեղավորվում է Շափշուկա գյուղի ծայրամասում, տեղացի Փափազյան Մարկոսի ծխախոտի չորանոցում, մինչև որ հատկացված հողամասում տուն են կառուցում: Հիմնական շինանյութը փայտն էր, որը կտրում-բերում էին մոտակա անտառից: Պապս ապրիլի կեսին լազուտ (եգիպտացորեն) է ցանում, ապա ծխախոտի սածիլանոց հիմնում իր հետ բերած «Սամսուն» տեսակի ծխախոտի սերմը ցանելու համար: Գյուղում հայկական դպրոց կար, և եկող աշնանից Հակոբը և Հովակիմը պատրաստվում էին դպրոց հաճախել: Աշնանը, բերքն ամբարելուց հետո, Սարգիսը որոշում է գնալ տեսնել աթիսագների երկիրը: Լսել էր, որ հայաբնակ Մծարա գյուղում վաղուց ի վեր ապրում է իր հորեղբայրը: Այս գյուղը շատ է դուր գալիս Սարգիսին, և նա վերադառնալուց հետո ընտանեկան խորհուրդ է անում: Որոշում են Շափշուկայում մի բերք ևս հավաքել, այնուհետև տեղափոխվել Մծարա: Այդպես էլ անում են: Հորեղբայրն ամեն ինչով օգնում է Սարգիսին: Նրա ընտանիքին է հատկացնում իր հին տունը, մի փոքր գոմ և հողամասի մի մասը: Ամեն ինչ լավ կլինե, թե այդ կողմերում տարածված ջերմախտ հիվանդությունը չսպառնար բնակիչներին: Հիվանդանում են նաև Սարգիսի երեխաներից երեքը: Մի կիրակի օր Սարգիսը դեղ ձարելու համար Սուխում է գնում և ծանոթներից իմանում, որ ջերմախտից փրկվելու միակ միջոցը ծովափից հեռու՝ լեռներում ապաստանելն է: Հատկապես առողջարար էին համարվում Սուխումից 30 վերստ հեռու գտնվող Զաբալ-Շեբելդա գյուղը և շրջակա Թուպաշեթ կեղ, Կարավեյ, Մարանբա բնակավայրերը: Պապս կարևոր էր, որ այդ գյուղերի կենտրոնական հատվածում կային ծխական դպրոց, խանութ, հացի փուռ, ծխախոտի պահեստ: Սարգիսն այցելում է այդ վայրերը, համոզվում, որ ջերմախտ հիվանդություն չկա, ապրուստի համար էլ լիովին բավարար պայմաններ են:

Մծարայից տեղափոխվելու ժամանակ այնպես է ստացվում, որ Սարգիս պապս հասնում է ավելի բարձրադիր բնակավայր՝ Զաբալից 12 կմ հեռու գտնվող Աբուխավա-րա, որտեղ և ապրեցին մեր տոհմի հետագա սերունդները:

ԼՈՒԻԹՅԱՆ ՉԱՅՆԸ

Ի՞նչ իմանաս՝ ինչ է տանում մարդ հետը: Անվերադարձ: Մեզ մնում է թողածը՝ այն, ինչ մնում է ի վերջո՝ իբրև հուշ, պատմություն ու այլևս անփարատ կարոտ: Բայց նախառաջ այն, ինչ մեծ Արսեն պապի ծոռները՝ Նարեկն ու Տաթևիկը, կրում են երակներում՝ որպես արյան ու ոգու ժառանգություն: Եվ դա է, որ ապրում է հավերժական ժամանակի մեջ: Գնա՝ գտիր ծայրը...



Արսեն Յալանուզյան

Դեմքին խաղաղություն կար, բաց մոխրագույն աչքերը՝ զուլալ ու տխուր, երբեմն ամոթխած ծայտում էին, անկեղծորեն զարմանում, իսկ երբեմն էլ ասես ներս էին նայում՝ խոր, սևեռուն: Փակվում էր: Զարմանալի լռություն ուներ: Ես սիրում էի նրանց տան այդ լռությունը, որ շնչելու, ապրելու տարածություն էր բացում մի տեսակ: Նրա ներկայությամբ կարող էիր ինքդ լինել ու հալվել, ինքնանալ, ծուլվել այդ հանդարտ, խոհուն լռությանը և լռել արդեն քո՝ լռությամբ: Շատ քիչ է հանդիպում կյանքում քեզ համար տարածություն բացող և քո ներքին տարածությունը հարգող մարդ: Գրեթե բոլորն ուզում են խլել քոնը և իրենցը պարտադրել քեզ...

Զարմանալի մարդ էր: Նրա ներկայությամբ հնարավոր չէր վատ բան մտածել, ուր մնաց ասելի: Պատկառանք էր ներշնչում անխոս: Ոչ մի կյանքի դաս, ոչ մի քարոզ, ուսուցողական կեցվածք կամ դիտարկում: Սովորեցնում էր անբառ: Լռում էր իր զարմանալի լռությամբ ու ասում այն, ինչ հնարավոր չէ ասել բառերով: Ոչ մի բարդ բան. նա պարզապես տիրապետում էր լռելու և մարդուն հարգելու արվեստին:

Բայց ես մեղավոր եմ նրա առաջ... Ես փորձում էի թափանցել նրա լռության մեջ, որովհետև ահավոր հետաքրքիր էր, որովհետև կարծում էի, թե կյանքի մասին գիտի մի բան, որը ինքը չի ասի, ինքս պիտի հասկանամ: Բայց ես դեռ չէի սովորել նրա նման լռել, դրա համար էլ ուզում էի թափանցել նրա խորհրդավոր լռության մեջ, որը գուցե թաքցնում էր երկարակեցության գաղտնիքը: Չգիտեմ: Համենայն դեպս ինձ այդպես էր թվում այն ժամանակ:

Իսկ հիմա նա չկա: Նա գնաց՝ թողնելով մեզ իր լռությունը՝ հանդարտ, իմաստուն, ազնիվ ու արդար լռությունը, որի մեջ մեզնից յուրաքանչյուրն ուներ իր ծայրը, իր շունչը, իր բաժին սերն ու կարոտը: Իսկ մնացյալը... Լռություն:

Ծոռան՝ Նարեկի մայրը՝ ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ 2009թ.

Մերգեյ Վարդանյան

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԿՐՈՆԱՓՈԽ ՆԱՄՇԵՆԱՆԱՅԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Մեծ եղեռնի և նրա հետևանքներից մեկի՝ բռնի կրոնափոխված հայերի մասին հրապարակավ խոսելու արգելքի պատճառով տասնամյակներ շարունակ Թուրքիայի հայ մտավորականներն ու գիտնականները չէին կարողանում արտահայտվել:

Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Հայաստանում ևս այդ թեման չէր արծարծվում և միայն 1980-ական թվականներից սկսած հատուկեմտ հրապարակումներում քիչ թե շատ հիշատակվում էին բռնի իսլամացված հայերը, մասնավորապես՝ համշենահայերը:

Բռնի մահմեդականացված հայերի մասին վերջին տարիների հայկական և թուրքական մամուլի բազմաթիվ հրապարակումները, ցավոք, ուշացած են, քանզի մի քանի տասնամյակ ձգված լռությունը անդառնալի կորուստներ է պատճառել: Շատ կրոնափոխվածներ, որ պահպանել էին հայերենը և իրենց ծագման մասին հիշողությունը, ԽԱՀՄ-Թուրքիա փակ սահմանի պատճառով կտրվելով Հայաստանից և Վրաստանի հայաբնակ շրջաններից, մոռացել են մայրենի լեզուն և հեռացել են իրենց արմատներից: Այդ ընթացքում թուրքական քարոզչությունն իր սև գործն էր անում՝ ստեղծելով հայի բացասական կերպար, կեղծելով պատմություն ու մահմեդականացված հայերի անցյալը: Թուրքիայի հայ հոգևորականներն էլ, իրենք լինելով իրավագուրդ, չէին կարողանում օգնության ձեռք մեկնել գավառներում ու լեռնային հեռավոր գյուղերում ծվարած կրոնափոխ հայրենակիցներին: Կ. Պոլսի Հայոց պատրիարք, ամենապատիվ Ս. Սեպրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը ԱՄՆ կոնգրեսական պատվիրակության հետ 2007թ. մայիսի 30-ին պատրիարքարանում հանդիպման ժամանակ, հիշեցնելով, որ Մեծ եղեռնի տարիներին մեկ ու կես միլիոն «հայ բնակիչներ բնաջնջուեցան», նշեց, որ «Պետք չէ մոռնալ նաև, որ տեղահանության ընթացքին, տեղահան ըլլալի փրկուելու համար, մեծ թիվով հայեր մահմեդականությունը ընդունեցին: Մենք զանոնք ևս մեզմեկ կը նկատենք, քանի որ, նոյնիսկ եթե տարբեր կրոնի մը անցած են, հայերէն կը խօսին և հայ մշակոյթը կ'ապրին»: Կարծում ենք, որ պատրիարքի ասածը կարող է տարածվել նաև 18-րդ դարում Համշենի գավառում բռնի կրոնափոխված հայերի այն հատվածի վրա, որն այսօր սփռված է իր բնօրրանից բավականին հեռու և պահպանել է հայերենը:

Իսկ որքա՞ն է նրանց թիվը 21-րդ դարակազմին Թուրքիայում:

Թուրքական իշխանությունները թեև արտաքուստ ցույց են տալիս, որ Թուրքիայում բոլորը թուրք են, իրականում, ներքուստ անհանգիստ են և իրենք էլ են փորձում պարզել երկրում բնակվող ազգերի իրական խճանկարը: Ազգային

անվտանգության խորհրդի հանձնարարությամբ Կայսերիի (Կեսարիա) Էրջիես, Մալաթիայի Ինեոնյուի անվան և էլազդղի (Սարբերդ) Ֆըրաթ (Եփրատ) համալսարանների գիտնականները, ուսումնասիրելով Թուրքիայի ազգային փոքրամասնություններին, 2000 թ. իրենց կազմած զեկուցագրում, մյուս ազգային փոքրամասնությունների՝ 60 հազար հայերի, 12.6 միլիոն քրդերի, 870 հազար արաբների, 80 հազար լազերի, 2.5 միլիոն չերքեզների, 1 միլիոն վրացիների, 700 հազար գնչուների (չինգեն) կողքին նշել են նաև Ռիզեի և Արդվինի նահանգների 13.000 համշենցիներին:

Մեզ հայտնի չէ, թե ինչ սկզբունքով է արվել այդ մարդահամարը: Փաստն այն է, որ ըստ Ստամբուլի «Ակսու» թերթի 2008 թ. հունիսի 13-ի համարում տպագրված հոդվածի, այս թվերն են ներկայացվել Ազգային անվտանգության խորհրդին:

Մեր ուսումնասիրությունների համաձայն, համշենցիների, այդ թվում՝ հայախոս համշենահայերի թիվը շատ ավելին է: Նրանք ինձնականում ապրում են Արդվինի նահանգի Խոփա քաղաքում և գավառում: Տեղացիների ասելով, Խոփա քաղաքի բնակիչների կեսը կամ կեսից ավելին հայախոս համշենցի է: 2015 թ. Խոփա քաղաքում ապրում էր 19,748 մարդ, ըստ այդմ, նրանցից, ենթադրաբար, 10-11 հազարը համշենցի է: Տարեցտարի նրանց թվի ավելացման վկայությունն է նաև այն, որ 1922 թվականից հետո իրար հաջորդած 15 քաղաքապետներից երկուսը՝ Յըլմազ Թուփալօղլուն (2004-2009) և Նեդիմ Զիհանը (ընտրվել է 2014 թ.) համշենահայ են:

Իսկ Խոփայի գավառի գյուղերում ապրում է 15,104 (2015 թ.) մարդ: Ըստ մեր ուսումնասիրությունների, գավառում կա համշենահայերի 20-ից ավելի գյուղ ու գյուղակ, որոնց մի մասը վարչականորեն մտնում է Քեմալիաշայի (նախկին Մաքրիյալ) գյուղախմբի կամ բուջաքի (bucak) մեջ: Գավառում լազերն ապրում են յոթ գյուղում: Կրկին տեղացիների վկայությամբ, գյուղական բնակչության մեջ էլ համշենցիները գերակշռում են: Կարծում ենք՝ նրանց թիվն անցնում է 8 հազարից: Ի մի բերելով, կարող ենք ասել, որ Արդվինի նահանգի Խոփայի գավառի 34,852 (2015 թ.) բնակիչների կեսից ավելին՝ շուրջ 18-20 հազարը (գուցե մի քիչ ավելի) համշենցի է: Ռոպեսգի մեր ենթադրությունն ավելի առարկայական լինի, առաջին անգամ ներկայացնում ենք Խոփայի գավառի համշենահայերի բոլոր բնակավայրերի մեր կազմած ամբողջական ցանկը, որը վերջին տարիներին մեր այցելությունների ընթացքում ձևավորվել է լրացրել ենք: Փակագծերում նշել ենք նաև նրանց նախ-

(շարունակությունը՝ 8-րդ էջում)

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՄՇԵՆԱՅԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

(սկզբը՝ 7-րդ էջում)

կին անունները և գյուղացիների օգտագործած տարբերակները՝ 1. Բալըքը (Ձէնդիդ), 2. Բաշոբա (Խիզի, Խիզոբա), 3. Գյունեշի (Ձաղրինա, Ձարգինա), 4. Էշմեքայա (Վէյի Արդալա), 5. Հենդեք (Գարջի), 6. Յուլդերե (Ձուրքիջի), 7. Չավուշլու (Չավուշին), 8. Չիմենլի (Վայի Արդալա), 9. Փընարը (Անջիօղ, Անջօրօխ), 10. Քոյունջուլար (Ձալունա, Ձալօնա), ինչպես նաև 11. Քեմալփաշա (Մաքրիյալ) ավանը և նրա տեղական ինքնակառավարման մարմնի՝ քաղաքապետարանի (belediye) ենթակայության տակ գտնվող հետևյալ գյուղերը՝ 12. Աքդերե (Չօլի քեդ, Մէդօղում քեդ), 13. Գյումյուշդերե (Խէլու քեդ), 14. Չամուռլու (Չանջախանա, Չանջաղօն), 15. Ուչքարդեշ, 16. Քազըմիյե (Վէյի Սարփ), 17. Քարասունանիյե (Խէձէլօն, Խեցեյան), 18. Քյոփրուջու, 19. Օսմանիյե (Քէշօղդեք քեդ, Քէշօղլինօուն քեդ), նաև Քայա գյուղը, որը կազմված է չորս գյուղակներից՝ 20. Խալբաշի՝ Հալբաշը, 21. Շանա, 22. Չաքմադին, 23. Փափաբ։

Քեմալփաշայի (Մաքրիյալի) բուջաքում (bucak), ըստ թուրքական պաշտոնական վիճակագրական տվյալների 1990 թ. բնակվում էր 2658, 2000 թ.՝ 4124, 2007 թ.՝ 4597, 2008 թ.՝ 4519, 2009 թ.՝ 4480, 2010 թ.՝ 4794, 2011 թ.՝ 4894, 2012 թ.՝ 4942, 2013 թ.՝ 5216, 2014 թ.՝ 5182, 2015 թ.՝ 5176 մարդ։

Համարյա 3.000 կրոնափոխ, բայց հայախոս համայնախայեր են բնակվում նաև Արդվինի նահանգի Բորջբայի գավառի (բնակչությունը 2007թ.՝ 24.133, 2015 թ.՝ 22.293 մարդ) Բորջբա քաղաքում (2015 թ.՝ 10.864) և Չիֆթեքյուփրու (Չիսալա), Չայլը (Բէլիվան, Բէլլէվան, Բալլիվօն) և Յեշիլքոյ (Մանասթըր) գյուղերում։

Այսպիսով, Արդվինի նահանգում, որի բնակչության թիվը 2015 թ. կազմել է 168 հազար 370 մարդ, ըստ մեր մոտավոր

հաշվումների, բնակվում է շուրջ 24-25 հազար հայախոս համայնություն, այդ թվում՝ 22-23 հազարը Խոփայի և Բորջբայի գավառներում, 1-2 հազարը, կամ ավելի քիչ՝ սփռված ողջ նահանգում։



Մեր ունեցած տեղեկություններով՝ Սաքարյայի նահանգի Աշմաբաշը գյուղում և գիտեն Խոփայի խոսվածքը, թեև առօրյա կյանքում միջին և նոր սերունդը նախընտրում է հաղոր-

կին հունական գյուղ է, կա հունական եկեղեցի, Քեսթանեփընար, Աքթաշ, Քարափեյլիթ, Ենիդաղ (այժմ՝ Օրթաքյոյ), Լահանա, Քարաթավուք, Ենիջե, Հեմշին (այժմ՝ Արմուրլու) և Գեղամ (այժմ՝ Քուվուքփեյլիթ), որը նախկինում քրիստոնյա համայնախայերով էր բնակեցված։ Այս գյուղերի բնակիչների միջին և նոր սերունդը ևս թուրքերեն է խոսում, թեև հասկանում է Խոփայի խոսվածքը։ Ըստ վկայությունների, շրջակա գյուղերի այլազգի բնակիչները վերոհիշյալ գյուղերի համայնություններին էրմենի են ասում։

Իսկ որքա՞ն է թուրքախոս դարձած համայնությունների թիվը Ռիզեի նահանգում, որտեղ գտնվել է պատմական Համամաշեն-Համշեն գավառը, որն այժմ բաժանված է մի շարք գավառների՝ Հեմշին, Չամլըհեմշին, Ֆընդըքլը, Իքիզդերե, Չայեյի, Փազար, Արդեշեն։ 2015 թ. տվյալներով Ռիզեի նահանգն ու-



ղակցվել թուրքերենով։ Այսօր այդ նահանգի Քարասու և Քոջալի, ինչպես նաև հարևան Դյուզդեի նահանգի Աքթաքոջա գավառներում կան մահմեդական համայնությունների մի շարք գյուղեր՝ Փարալը (հիմնականում բաշիհամշենցիներ, նաև խոփացի համայնություններ. բնակիչները եկել են 1930-ական թթ., նախ-

ներ 328.979 բնակիչ, որից 215.596-ը՝ քաղաքային, 113.383-ը՝ գյուղական բնակչություն էր։ Ըստ նահանգի տարբեր գյուղերում մեր հարցումների, բնակիչներից 3-ից, 4-ից մեկը ծագումով համշենցի է, թեև նրանցից քչերն են ընդունում իրենց հայկական արմատները։ Նահանգի համայնությունների մեջ կան ծախսա-

կողմյաններ, մարքսիստներ, բայց մեծ թիվ են կազմում նաև իսլամիստ անհանդուրժողականները և գորշ գայլերը։



Հավանաբար նահանգում թուրքախոս համայնությունների թիվը շուրջ 80-100 հազար է։ Քանի որ գյուղերից շատ մեծ է արտագաղթը դեպի քաղաքներ, ուստի, ենթադրում ենք, որ մի այդքան էլ թուրքախոս համայնություններ են ապրում Ստամբուլում, Անկարայում, Բուրսայում, Իզմիրում և Թուրքիայի այլ նահանգներում։

Թուրքախոս համայնություններ են բնակվում նաև Տրապիզոնի նահանգի (բնակչությունը 2013 թ.՝ 758.237 մարդ) Արաքլը, Սյուրմենե և այլ գավառներում։ Քանի որ Տրապիզոնի նահանգում դաշտային աշխատանքներ կատարելու համար նյութական միջոցներ չենք ունեցել, ուստի չենք կարող նահանգի համայնությունների քանակի մասին որևէ թիվ ասել։

Մեզ հաջողվել է պարզել, որ թուրքախոս համայնությունների 14 գյուղ էլ կա Էրզրումի նահանգում, որոնցից եղել ենք 2 գյուղում։ Ըստ հարցումների, այդ 14 գյուղերում էլ շատ մեծ է ուժացումը, մարդիկ շատ քիչ հայերեն բառեր են հիշում։ Քանի որ բոլոր գյուղերում հնարավորություն չենք ունեցել լինել, ուստի Էրզրումի նահանգի համայնու-

նների մասին որևէ թիվ չենք կարող ասել։

Այսպիսով, ըստ մեր հետազոտությունների, Թուրքիայում բնակվում են Համշենի բարբառի Խոփայի խոսվածքով հաղորդակցվել կարողացող մոտավորապես 30-35 հազար համշենախայեր և շուրջ 200 հազար թուրքախոս համշենախայեր։

Թուրքիայի համայնությունների իրական թիվը ճշտելու համար պետք է հետազոտություններ կատարել Արդվինի, Ռիզեի, Տրապիզոնի, Էրզրումի, Դյուզդեի և Սաքարյայի նահանգներում, նաև Ստամբուլում և այլ քաղաքներում, ինչի համար անհրաժեշտ են նյութական միջոցներ, ուստի մեր հայրենակիցներին խնդրում ենք աջակցել այս հարցում։ Թվաքանակի ուսումնասիրությանը զուգահեռ կարվեն նաև ազգագրական, բանագիտական և բարբառագիտական հետազոտություններ, կնկարահանվեն գյուղերն ու տները, կենցաղային իրերն ու աշխատանքային գործիքները, նաև գյուղացիների երգն ու պարը, նվագարանները, կծայնագրվեն ասացողները, ինչի համար անհրաժեշտ են տեսանկարահանող, ձայնագրող և լուսանկարող որակյալ սարքեր։

Ինչ վերաբերում է Թուրքիայի իսլամացած հայերի մասին մամուլում և հեռուստատեսությամբ շրջանառվող թվերին՝ 2, 3, 4, 4,5, 5 միլիոն, ապա, կարծում ենք, դրանք առայժմ չունեն գիտական հիմնավորում և հայտնի չէ, թե իրականում իսլամացած հայերը ավելի շա՞տ են, թե՞ ավելի քիչ են, քանի որ այդ թվերը բարձրաձայնվում են առանց գիտականորեն ընդունված չափորոշիչների, առանց բոլոր նահանգների, գավառների, քաղաքների ու գյուղերի բնակիչների ազգագրական, բարբառագիտական, ծագումնաբանական հավաստի վիճակագրական տվյալների շտեմարան ունենալու։

ԱՐԴՎԻՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԳՐԱԹՎԱԾ ԽԱՂԻԿՆԵՐ

Արդեյեցե դաղաքէ
Գարմի քուրբա հաքնի գուն,
Չաուշնեցէ դէսնին անա
Ցախուդն ի վէ փախչի գուն։

(Արդալացիների երեխաները
Կարմիր գուլպա են հագնում,
Չաուշեցի որ տեսնեն,
Անտառն ի վեր փախչում են)։

Փարցէ փօթին հաքնօղ ում,
Գյօլայ ի վէ էրթօղ ում,
Յէս թա խանում էլլին նա,
Գէջալուդէս խադվօղ ում։

(Բարձրակրունկ կոշիկ են հագնելու,
Գյոլեն* ի վեր գնալու են,
Ես որ տանտիկին դառնամ,
Գիշերանոցս ասեղնագործելու են)։
* տեղանուն է

Աշուն քուրբա, հասնի գու
Փէշին վային լիլիգէ,
Քա՛, քէզիգի մէնա՞ց թա
Մուլալուն թուխուլիգէ։

(Աշուն է գալիս, հասնում է
Փշի վրայի մասուրը,
Քա՛, քեզ մնա՞ց
Մուլալույիների թխամաշկը)։

Դասէ քուրուշ դէվօղ ում
Քէզի համալ փերնօղ ում,
Իմ դադին քունթըրվիքէ
Քէզի սերփէլ դէվօղ ում։

(Տասը դուրուշ են տալու,
Քեզ ծառա են վարձելու,
Իմ հոր գոմի դիմացը
Քեզ սրբել են տալու)։

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ։ Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-բարեգործական հասարակական կազմակերպություն։ Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8։ «Եռախոս» (+374+10) 20 21 26։ Գրանցման վկայական՝ N 03Ա054979, տրված՝ 26.06.2002թ.։ Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին։ Արտատպության կամ մեքեթման դեպքում հղումը «Չայն համշենականին» պարտադիր է։ Հրատարակվում է 2004թ. օգոստոսից։ Տպագրվում է «ՆՏ Հոլդինգ» ՍՊԸ-ում։
«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван),
Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan).
«DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org